

239

Թիւ 24809
Մարտ 12, 1976

Բարեշնորհ
Դանիէլ Սրկ. Բոչարեան
Հոգեւոր Մատակարար
Ս. Օրկիշ Եկեղեցւոյ
Ուսար.

Սիբիլի Դանիէլ Սարկաւազ,

Սաացած ենք Մարտ 8, 1976 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 18ին զումարուած հա-
մայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի վեց
անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով ցուէարկութեան արդիւնքը՝
կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմա-
կան Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերաց-
նենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած
ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորըն-
տիր Դիւանի անդամոց անունները:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ
ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տա-
րի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն
համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸՆԳԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Չարլզ Սարաղեան
Ներսէս ճան Խաղայեան
Լիօ Բարնակեան
Տէյվիս Ատիշեան
Յարութիւն Գասպարեան
Ճան Մերզիկեան